


ՄԵՂԱԴՐՅԱԼԻ «ՊԱՐՏԱԴԻՐ» ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԾԱԳԱԾ ՀԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾՈՎ ԱՆՁԻ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է անձնական ազատության իրավունքի պաշտպանության գործնական հիմնախնդիրներին՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա ձերբակալելու և դատարան ներկայացնելու համար, ազատության մեջ գտնվող մեղադրյալի ձերբակալման իրավակարգավորումների համատեքստում:

Անդրադառնալով հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալմանը՝ հեղինակը քննադատում է Վճռաբեկ դատարանի իրավունքում սահմանված՝ նախաձեռնված քրեական վարույթով ձերբակալման այս տեսակը կիրառելու բացարձակ արգելքը: Հիմնավորելով, որ քրեական վարույթ նախաձեռնված լինելն ինքնին չի բացառում արտաքին հանցանշաններով անձին անհապաղ ձերբակալելու իրավիճակները՝ հեղինակն անընդունելի է համարում հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածն անմիջականորեն ծագած համարելու՝ «քրեական վարույթ նախաձեռնված չլինելու» չափանիշը և դրա փոխարեն առաջ է քաշում «կասկածն ապացույցներից չբխելու» չափանիշը:

Անդրադառնալով ձերբակալման մյուս տեսակին՝ հեղինակը պնդում է, որ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանել է դատարան ներկայացնելու համար ազատության մեջ գտնվող մեղադրյալին պարտադիր ձերբակալելու պահանջ, որն անձի անազատության կանխավարկածի դրսևորում է և հակասում է անձնական ազատության կանխավարկածին ու քմահաճ ձերբակալման միջազգային-իրավական արգելքին: Հեղինակը կարծում է, որ օրենսդիրը մեղադրյալի ձերբակալումը պար-

Գևորգ Բադդասարյան – իրավագիտության թեկնածու, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական

Геворг Багдасарян – кандидат юридических наук, преподаватель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ, государственный советник юстиции третьего класса

Gevorg Baghdasaryan – Candidate of Law, Lecturer at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics, State Councilor of Justice of the Third Class

Էլ. փոստ՝ baghdasaryangevorg001@gmail.com <https://orcid.org/0000-0002-6407-6253>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.03.2025

Գրախոսվել է՝ 10.06.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

տադիր է համարել ձևական նպատակներով՝ մեղադրյալին կալանավորելու միջնորդությունը պատշաճ համարելու և կալանավորման ընթացակարգ սկսելու համար նպատակ ունենալով վերջինիս կալանավորող դատարանին գերծ պահելու ազատությունից զրկող համարվելու բեռից:

Բանալի բառեր – *անձնական ազատության իրավունք, ազատության կանխավարկած, քրեական վարույթ, դատարան, ձերբակալում, կալանք, հիմնավոր կասկած, մեղադրյալ, արտաքին հանցանշան*

Ներածություն

Անձնական ազատության իրավունքի երաշխավորումը քրեական դատավարության գիտության և պրակտիկայի ամենազգայուն հարցերից է: Որպես կանոն գտնվելով հանրային և մասնավոր շահերի բախման եզրագծին՝ անձնական ազատության իրավունքի պաշտպանության հարցերը շարունակ առարկա են եղել վեճերի, որոնց կողմերը փորձել են ավելացնել կամ նվազեցնել այդ իրավունքի սահմանափակման հնարավորությունները՝ այդ կերպ այս ու այն կողմ շեղելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը:

Անձնական ազատության իրավունքն անձի կարգավիճակի ամենակարևոր բաղադրիչներից է, նրա ազատ կենսագործունեության հիմնական պայմանը, որի սահմանափակման դեպքում մեխանիկորեն բացառվում կամ սահմանափակվում են նաև այլ իրավունքներն ու ազատություններն իրացնելու նրա հնարավորությունները: Քրեական վարույթն իրականացվում է հանցագործության դեպքի կապակցությամբ, իսկ պետության և մեղադրյալի միջև քրեադատավարական հարաբերությունները ծագում են նրա կողմից հանցանք կատարելու վարկածի շուրջ, հետևաբար անձնական ազատության իրավունքի սահմանափակման հանրային շահը քրեական վարույթում բարձր է, իսկ սահմանափակումը՝ ինտենսիվ: Նման պայմաններում առավել քան կարևոր է, որ քրեական վարույթում այդ իրավունքի գործնական երաշխավորումը հիմնված լինի չարաշահումների նվազագույն ռիսկեր պարունակող այնպիսի օրենսդրության վրա, որի հիմքում իսկապես համաչափորեն հաշվի են առնված հանրային և մասնավոր շահերը: Ընդ որում՝ քմահաճ ազատագրկումից պաշտպանության երաշխիքներ պետք է ունենան անձնական ազատության իրավունքի սահմանափակման բոլոր դեպքերը՝ անկախ տևողությունից՝ նկատի ունենալով, որ դրա կարճաժամկետ սահմանափակման առանձին իրավիճակներ ավելի ինտենսիվ են և ավելի մեծ ազդեցություն ունեն անձի վրա: Ասվածը վերաբերում է հատկապես ձերբակալմանը՝ որպես թեև կարճատև, բայց հանկարծակի կիրառվող հարկադրանքի միջոցի:

Ձերբակալման ինստիտուտի կիրառման պրակտիկան վեր է հանել դրա տեսակներից երկուսի՝ հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալման և ազատության մեջ գտնվող մեղադրյալին

դատարան ներկայացնելու համար ձերբակալման իրավակարգավորման ուրոշ խնդիրներ, որոնք կապված են մի կողմից՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձին ձերբակալելու ձևական պատճառներով անհնարինության, մյուս կողմից՝ նույնքան ձևական պատճառներով մեղադրյալի պարտադիր ձերբակալման հետ:

Ձերբակալումը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալումը հարկադրանքի այս միջոցի առավել հաճախ կիրառվող տեսակն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալումը կարող է կիրառվել, եթե 1) անձը բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո, 2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի, 3) տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում, ներառյալ տրանսպորտային միջոցում, հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր և 4) երբ առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր, և, միաժամանակ, նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր, կամ նրա ինքնությունը պարզված չէ:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալումը նախքան քրեական վարույթ նախաձեռնելը հնարավոր միակ հարկադրանքի միջոցն է: Ձերբակալման այս տեսակը, մի կողմից լինելով հանցանքը խափանելու և այն կատարած անձին վնասագերծելու առաջին դատավարական միջոցը, էական նշանակություն ունի հանրային շահի պաշտպանության տեսանկյունից, մյուս կողմից, կիրառվելով առաջին հանցանշանների հիման վրա և տեղեկությունների խիստ սակավության կամ դրանց պատշաճ գնահատման համար անհրաժեշտ ժամանակի բացակայության պայմաններում, իրավունքների անհիմն սահմանափակման զգալի ռիսկեր է պարունակում: Նշվածով պայմանավորված՝ ձերբակալման քննարկվող տեսակի կիրառման հիմքերն ու պայմանները մշտապես անհամաձայնությունների առարկա են եղել: Տեսության մեջ և պրակտիկայում հատկապես վիճելի է եղել քրեական վարույթով որոշակի ապացույցներ ձեռք բերելուց հետո հանցանք կատարելու անմիջականորեն ծագած կասկածանքով անձին ձերբակալելու հնարավորությունը: Այդ հարցն արդիական մնաց նաև քրեական դատավարության նոր օրենսգրքի պայմաններում ու թեև ի վերջո քննարկվեց

նաև Վճռաբեկ դատարանի իրավունքում, բայց դրա շուրջ վեճերն այդպես էլ չդադարեցին:

Մեկնաբանելով ձերբակալման քննարկվող տեսակը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն *Ալբերտ Հովհաննիսյանի* գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալման ինստիտուտի հիմքում հանցագործության կանխման և խափանման *in flagranti delicto* (անձին ենթադրյալ հանցագործությունը կատարելու պահին (տաք հետքերով) բռնելու) սկզբունքն է: Նման իրավիճակները որպես կանոն լինում են այն դեպքերում, երբ, օրինակ, ոստիկանությունն իրականացնում է օրենքով նախատեսված գործառույթները և տեղում «Ֆիզիկապես» բախվում է ենթադրյալ հանցանքի և այն կատարող անձի հետ և արձագանքում քրեական օրենքի խախտման փաստին:

Վճռաբեկ դատարանն առանձնացրել է ձերբակալման քննարկվող տեսակի հիմքում ընկած՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի» ծագման անմիջականությունը որոշելու համար էական երկու փոխկապակցված գործոն: Դրանցից առաջինը ժամանակային գործոնն է, որը ենթադրում է, որ հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը հաստատող փաստական իրավիճակն ի հայտ գալու և անձին ազատությունից զրկելու միջև ժամանակային խզում կա՛մ չկա (օրինակ, նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս), կա՛մ աննշան է (օրինակ, անձը բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելուց անմիջապես հետո): Վերջին դեպքում թեև ձերբակալում իրականացնող պաշտոնատար անձն անմիջականորեն չի հետևում ենթադրյալ հանցանքի կատարման փաստական հանգամանքներին, սակայն դրանից անմիջապես հետո («կարճ ժամանակի հայեցակարգ») հայտնաբերում է ենթադրյալ հանցանքը կատարողին կամ ենթադրյալ հանցանքին նրա առնչության մասին վկայող բացահայտ հետքեր:

Երկրորդ գործոնը, ըստ Վճռաբեկ դատարանի, հանցանքի արտաքին դրսևորումն է, երբ ձերբակալումն իրականացվում է ենթադրյալ հանցանքի արտաքին հանցանշանների (բացահայտ հետքերի) հիման վրա (*indices apparents*): Այս գործոնը կապված է կոնկրետ հանցանքի բնույթի և կատարման փաստական հանգամանքների հետ (օբյեկտիվ կողմի հատկանիշների), քանի որ միայն ակնհայտության պայմաններում կատարված հանցագործությունների դեպքում է, որ ոստիկանության աշխատակիցները քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանն արձագանքում են անմիջապես¹:

Ներկայացված մոտեցումը բավականին ամբողջական է բացահայտում ձերբակալման քննարկվող տեսակի՝ որպես ազատության իրավունքի սահմանափակման անհետաձգելի խափանիչ միջոցի էությունը: Այս մեկնաբանությունն իսկապես հնարավոր չի համարում անձին ձերբակալել հանցանք

¹ Տե՛ս Ալբերտ Հովհաննիսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ ՀԿԴ/0188/06/23 որոշումը:

կատարելու անմիջականորեն ծագած կասկածով այն դեպքում, երբ այդ կասկածն առաջացել է տևական քննության արդյունքում, առավել ևս, երբ այն առաջանալու և ձերբակալման միջև անցել է տևական ժամանակ:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նույն որոշմամբ սահմանել է, որ «նախաձեռնված քրեական վարույթի դեպքում, երբ իրականացվում է կոնկրետ դեպքի հանգամանքների վերաբերյալ նախաքննություն, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածի առկայության հիմքով ձերբակալման կիրառում հնարավոր չէ, անկախ նրանից, թե քննության արդյունքում հայտնի է դառնում ենթադրյալ հանցանք կատարած անձը, որը մինչ այդ անհայտ էր, կամ քննիչի կողմից ձեռք են բերվում քննության առարկա դեպքին կոնկրետ անձի առնչությունը հաստատող ապացույցներ: Այս կանոնից միակ բացառությունը վերաբերում է գաղտնի քննչական գործողություններ կատարելու ընթացքում ենթադրյալ հանցանքը կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալելու հնարավորությանը, քանի որ հետաքննության մարմնի աշխատակիցը տվյալ դեպքում գործում է սեփական նախաձեռնությամբ և անմիջականորեն կարող է բախվել ենթադրյալ հանցանքի փաստին և այն կատարողին»²:

Վճռաբեկ դատարանն այս կերպ փաստացի առաջ է քաշել ձերբակալման քննարկվող տեսակը կիրառելու լրացուցիչ պայման, հանցանք կատարելու հիմնավոր կասկածն անմիջականորեն ծագած դիտելու երրորդ՝ «քրեական վարույթ նախաձեռնված չլինելու» չափանիշը՝ դրանով սկզբունքորեն բացառելով արտաքին հանցանշաններով ծագած հիմնավոր կասկածով անձի անհապաղ ձերբակալումը քրեական վարույթ նախաձեռնվելուց հետո: Ընդունելով, որ ձերբակալման քննարկվող տեսակը կարող է կիրառվել, որպես կանոն, մինչև քրեական վարույթ նախաձեռնելը, քանի որ հանցանք կատարելու բացահայտ հետքերով անհապաղ ձերբակալման իրավիճակները բնութագրական են առավելապես հանցանքի մասին առաջին տեղեկությունն ստանալու և այն կատարած անձին այդ պահին բռնելու իրավիճակին, միաժամանակ վերը ներկայացված բացարձակ արգելքը համարում ենք ծայրահեղ և անընդունելի:

Բանն այն է, որ «քրեական վարույթ նախաձեռնված չլինելու» չափանիշը ձերբակալման քննարկվող տեսակի կիրառումը բացառում է քրեական վարույթ նախաձեռնված լինելու փաստի ուժով՝ անկախ նրանից, թե ինչից է բխում հանցանքը կոնկրետ անձի կողմից կատարելու կասկածը: Անընդունելի համարելով անձի ձերբակալումն այն դեպքում, երբ հանցանք կատարելու վերաբերյալ կասկածը բխում է վարույթով ձեռք բերված ապացույցներից՝ քննարկվող մեկնաբանությունը քրեական վարույթ նախաձեռնելու արձանագրություն կազմված լինելու ուժով ձերբակալման արգելք է սահմանել նաև

² Նույն տեղում:

այն դեպքերի համար, երբ այդ կասկածն «ապացուցողական ծագում» չունի: Այդ մոտեցմամբ ձերբակալման քննարկվող տեսակը հնարավոր չէ կիրառել այն պարագայում, երբ անձի կողմից հանցանք կատարելու հիմնավոր կասկածը ձևավորվել է թեկուզև քրեական վարույթ նախաձեռնվելուց հետո, բայց արտաքին հանցանշաններով ու հանցանք կատարած անձի հետ «ֆիզիկական բախման» արդյունքում. օրինակ, երբ հետաքննության մարմինը սպանության դեպքի վայրի մոտակայքում հայտնաբերում է հանցագործության հետքեր կրող հագուստով անձին, կամ երբ քննչական գործողությունների արդյունքում հանցանք կատարած անձի մասին որևէ տվյալ ստացված չլինելու պայմաններում տուժողը պատահական հանդիպում է նրան, մտաբերում և մատնացույց անում մոտակայքում գտնվող ոստիկանին: Այնինչ նկարագրված իրավիճակներում գործ ունենք հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի հետ, որն ակնհայտորեն բխում է հանցանքի բացահայտ հետքերից, և կասկածը ծագելու ու ձերբակալման միջև ժամանակային խզումը բացակայում է, ինչը վկայում է, որ քրեական վարույթ նախաձեռնված լինելն ինքնին չի բացառում հիմնավոր կասկածի ծագման անմիջականությունը:

Ընդ որում, թեև Վճռաբեկ դատարանը սահմանված կանոնից բացառություն նախատեսում է, բայց այն իրականում ոչ մի կապ չունի քրեական վարույթի ընթացքում անձին ձերբակալելու իրավիճակի հետ, հետևաբար սահմանված արգելքն իրականում բացարձակ է: Բանն այն է, որ կոնկրետ քրեական վարույթով կատարված գաղտնի քննչական գործողության ընթացքում մեղադրյալի կողմից այլ հանցանք կատարելու մասին նոր տվյալների հիման վրա նրան ձերբակալելը ոչ թե այդ քրեական վարույթի շրջանակում, այլ դրանից դուրս և բացարձակ այլ հանցանքի կապակցությամբ, նախքան դրա առթիվ քրեական վարույթ նախաձեռնելը, կատարված ձերբակալություն է: Քրեական վարույթով կատարվող ապացուցողական գործողության ընթացքում անձին բացարձակապես այլ հանցանք կատարելիս բռնելը նրա ձերբակալումը չի դարձնում քրեական վարույթի ընթացքում կատարված: Դրա ընթացքում կատարված կարող է համարվել բացառապես այդ վարույթի առարկա հանցանքը կատարելու հիմնավոր կասկածով ձերբակալումը, որը, մեր համոզմամբ, կարող է համարվել անմիջականորեն ծագած՝ պայմանով, որ առաջացել է Օրենսգրքի 109-րդ հոդվածով նախատեսված իրավիճակներում և չի բխում վարույթով կատարված ապացուցողական գործողությունների արդյունքներից: Հանցանք կատարելու հիմնավոր կասկածով ձերբակալումը պետք է բացառվի ոչ թե ինքնին այդ հանցանքի կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնված լինելու, այլ այդ կասկածը վարույթով ձեռք բերված ապացույցներից բխելու դեպքում:

Այլ կերպ ասած՝ հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածն անմիջականորեն ծագած լինելը որոշելու երրորդ չափանիշ պետք է դիտվի ոչ թե քրեական վարույթ նախաձեռնված չլինելը, այլ կասկածն ապացույցներից

չբխելը: Հետևաբար, այն դեպքում, երբ անձի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ կասկածը թեև ծագել է դրա կապակցությամբ քրեական վարույթ նախաձեռնված և քննչական գործողություններ կատարված լինելու պայմաններում, բայց ոչ թե դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցներից, այլ հանցանքի արտաքին հանցանշաններից, ապա վերջինս կարող է ձերբակալվել հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած կասկածանքով:

Ձերբակալումը ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որպես ձերբակալման ինքնուրույն տեսակ, նախատեսում է ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալումը: Օրենսգրքի 111-րդ հոդվածը հստակեցնում է, որ ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավասու է որոշում կայացնելու մեղադրյալին ձերբակալելու մասին:

Ինչպես նշվում է քրեական դատավարության օրենսգրքի հիմնական հայեցակարգային լուծումների բովանդակությունը բացահայտող Ուղեցույցում՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալումը, որպես ազատության իրավունքի կարճաժամկետ սահմանափակման դրսևորում, պայմանավորված է ձերբակալման և խափանման միջոց կալանքի հարաբերակցության նոր մոդելով³: Բանն այն է, որ Օրենսգիրքը վերանայել է անձի ազատության իրավունքի սահմանափակման նշված երկու միջոցների հարաբերակցության նախկին հայեցակարգը, համաձայն որի՝ ձերբակալումն ու կալանավորումը ինքնուրույն նպատակներ հետապնդող դատավարական հարկադրանքի միջոցներ էին, և անձի ձերբակալումը նրա կալանավորման պարտադիր նախապայման չէր⁴: Ամրագրված նոր մոդելի համաձայն ձերբակալումը կալանավորման սկզբնական փուլ է, հետևաբար կալանավորել կարելի է բացառապես անազատության մեջ գտնվող մեղադրյալին: Ներդրված մոդելի հիմնավորումն այն է, որ ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառվելու դեպքում դատարանն անձի ֆիզիկական ազատության սահմանադրական երաշխավորից վերածվում է նրան ազատությունից զրկողի⁵: Այս հիմնավորումն իր

³ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, էջ 190: <https://rm.coe.int/new-criminal-procedure-code-guideline-/1680a72908>, վերջին դիտում՝ 01. 03. 2025:

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թ. սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշումը:

⁵ Տե՛ս **Меликян, Р.** Некоторые вопросы интеграции института задержания в общую логику судебного контроля над ограничением фундаментального права на личную свободу // Պետություն և իրավունք, № 2 (90), 2021, էջ 104:

հերթին բխում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի տառացի մեկնաբանությունից, որը ենթադրում է, որ դատավորի մոտ տարվում է նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան արդեն իսկ ձերբակալված անձը:

Որդեգրված նոր մոտեցման իրավական հիմքը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթն է այն մասին, որ ձերբակալված մեղադրյալը դատարան է բերվում միջնորդությունը ներկայացնելու հետ միաժամանակ: Մեջբերված նորմն իհարկե հստակ և ուղղակիորեն չի սահմանում, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն կարող է ներկայացվել բացառապես ձերբակալված մեղադրյալի նկատմամբ, կամ որ չձերբակալված մեղադրյալի նկատմամբ այդպիսի միջնորդություն ներկայացվելու դեպքում դատական երաշխիքների վարույթ հարուցելը պետք է մերժվի: Թեև Օրենսգիրքն այդպիսի հստակ պահանջ սահմանող այլ դրույթ ևս չի նախատեսում, բայց պրակտիկայում մեղադրյալի ձերբակալումը իսկապես դարձել է խափանման միջոցների կիրառման դատական երաշխիքների վարույթ հարուցելու պայման, և այն հարուցելը մերժվում է, եթե քննիչի տրամադրության տակ գտնվող, չթաքնվող մեղադրյալը ձերբակալված չէ:

Ձերբակալման և կալանքի հարաբերակցության նոր մոդելն ու դատարան ներկայացնելու համար ազատության մեջ գտնվող մեղադրյալի ձերբակալման կարգավորումներն ու կիրառման պրակտիկան, հատկապես դրանց հիմնավորման համատեքստում, այն է՝ դատարանին ազատել անձի ազատությունը սահմանափակողի բեռից և ամրապնդել նրա՝ որպես այդ իրավունքի երաշխավորի դերը, առաջին հայացքից ողջունելի են: Բայց եթե ձերբակալման քննարկվող տեսակը դիտարկենք անձնական ազատության իրավունքի նշանակության, դրա սահմանափակման նպատակների և այն հետևանքների համատեքստում, որոնք առաջանում են հենց այն մեղադրյալի համար, որի ազատության իրավունքը ոչ թե սահմանափակող, այլ երաշխավորող պետք է լինի դատարանը, ապա առկա կարգավորումները մտահոգիչ են:

Այսպես, վերոգրյալ կարգավորումներից ստացվում է, որ դատարան ներկայացնելու համար ազատության մեջ գտնվող մեղադրյալի ձերբակալումը պարտադիր է: Մեղադրյալը, որի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտություն է տեսել քննիչը, չի կարող չձերբակալվել, նույնիսկ եթե վերջինս պատրաստակամ է ներկայանալ իրեն կալանավորելու հարցի քննարկման դատական նիստին: Հետևաբար, թեև Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քննիչն իրավասու է, բայց վերջինս իրականում պարտավոր է մեղադրյալին ձերբակալել, եթե որոշել է նրան կալանավորելու միջնորդություն ներկայացնել դատարան: Բացի այն բանից, որ անձի պարտադիր անազատությունն ընդհանուր առմամբ չի ընկալվում ա-

զատության կանխավարկածի հիմնարար պահանջի համատեքստում, պակաս մտահոգիչ չէ նաև այն, որ մեղադրյալի ձերբակալումը պարտադիր է, մեծ հաշվով, ձևական պատճառներով:

Այսպես, նախ չի կարելի առնվազն միանշանակ պնդել, որ դատարան ներկայացվելու համար ձերբակալված մեղադրյալին կալանավորող դատարանը, նրա ազատության իրավունքի երաշխավորը լինելով հանդերձ, նաև նրան ազատությունից զրկողը չէ: Բայց եթե նույնիսկ այդպես է, դատարանի համար «ոչ թե ազատությունից զրկողի, այլ այն երաշխավորողի» կարգավիճակ ապահովելու նպատակն իրականում ձևական է անձի ազատության ավելի վաղ սահմանափակումը բացատրելու համար: Դա որևէ առարկայական դրական հետևանք չի ենթադրում այն մեղադրյալի համար, որին կալանավորելու միջնորդությունը բավարարում կամ մերժում է դատարանը, հակառակը՝ դատարանի՝ որպես մեղադրյալի ազատության իրավունքի երաշխավորի դերն ընդօժեցելու հետևանքն այդ նույն մեղադրյալի համար փաստորեն այն է, որ նա պարտադիր՝ իրեն կալանավորելու միջնորդություն ներկայացնելու փաստի ուժով ձերբակալվում է: Դատարանն անձին ազատությունից զրկողի բեռից ազատվում ու ձերբակալված անձի ազատության իրավունքի երաշխավորն է կոչվում նրան նախքան դատարան ներկայացնելը պարտադիր ձերբակալելու գնով: Ավելի պարզ՝ ստացվում է, որ մեղադրյալը մինչև դատարան ներկայացվելը ձերբակալվում է, որպեսզի նրան կալանավորելու միջնորդությունը քննարկող դատարանը երաշխավորի նրա ազատության իրավունքը: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, ձերբակալված յուրաքանչյուրին օժտելով դատավորի մոտ տարվելու երաշխիքով, չի սահմանափակում չձերբակալված, բայց ազատության իրավունքի սահմանափակման ռիսկի ենթարկված անձի դատարանի իրավունքն ու դատական պաշտպանությունը:

Բացի այդ, այնքանով, որքանով մեղադրյալի ձերբակալումը նրան կալանավորելու միջնորդություն ներկայացնելիս ապահովման ենթակա պահանջ է, որը չպահպանվելու դեպքում դատական երաշխիքների վարույթ հարուցելը ենթակա է մերժման, հետևաբար մեղադրյալի ձերբակալումն ու նրան դատարան ներկայացնելը գործնականում ոչ թե նրան կալանավորելու, այլ այդ մասին միջնորդություն ներկայացնելու և դատարանում կալանավորման ընթացակարգ նախաձեռնելու պայման են: Ավելի պարզ՝ դատարան ներկայացվելու համար մեղադրյալին ձերբակալելու հիմքը նրան կալանավորելու անհրաժեշտության մասին քննիչի հետևությունն է, և վերջինս մեղադրյալին ձերբակալում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պատշաճ միջնորդություն դատարան ներկայացնելու համար, որը ձևական պատճառ է անձի ազատության իրավունքի սահմանափակման տեսանկյունից:

Ազատության մեջ գտնվող մեղադրյալի ձերբակալման պարտադիրությունն առավել խնդրահարույց է տնային կալանքը որպես խափանման միջոց

կիրառելու համար նրան դատարան ներկայացնելիս: Բանն այն է, որ Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթն այն մասին, որ տնային կալանքի կիրառման կարգի, ժամկետների և բողոքարկման վրա տարածվում են կալանքի համար նույն Օրենսգրքով սահմանված դրույթները, ենթադրում է, որ մեղադրյալը պետք է ձերբակալվի նաև այն դեպքում, երբ քննիչը կարծում է, որ անհրաժեշտ է նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել տնային կալանքը:

Բացի այն բանից, որ տնային կալանքի՝ որպես ոչ թե ազատությունից զրկում, այլ դրա սահմանափակում ենթադրող խափանման միջոցի կիրառման անհրաժեշտության դեպքում նրան նախքան այդ ձերբակալելը համաչափ չի թվում, այն նաև գործնականում զավեշտալի իրավիճակ է առաջացնում մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը փոփոխելու և տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում: Այսպես, նկատի ունենալով, որ դատարանի կողմից ընտրված խափանման միջոցն ավելի մեղմ, բայց դարձյալ դատարանի կողմից կիրառվող խափանման միջոցով փոխարինելու սահուն ընթացակարգ նախատեսված չէ, իսկ Օրենսգրքի 117-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգի համաձայն՝ մինչդատական վարություն դատարանի կիրառած խափանման միջոցը կարող է փոփոխել կամ վերացնել հսկող դատախազը, հետևաբար նկարագրված իրավիճակում հսկող դատախազի կողմից մեղադրյալին կալանքից ազատելուց հետո քննիչը դարձյալ պարտավոր է ձերբակալել վերջինիս՝ նրա նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն ներկայացնելու համար: Ավելի պարզ՝ կիրառված խափանման միջոցը մեղմացնելու համար կալանքից ազատված անձն անմիջապես պետք է ձերբակալվի՝ ավելի մեղմ խափանման միջոց կիրառելու նպատակով:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը դատարան միայն արդեն իսկ ազատությունից զրկված մեղադրյալին ներկայացնելու, ազատությունից զրկվելիս վերջինիս դատարանի իրավունքի երաշխավորումն այդպիսով առավել ակնհայտ դարձնելու, մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու դեպքում դատարանին վերջինիս ազատությունից զրկողի բեռից ազատելու նպատակով նախատեսում է ազատության մեջ գտնվող մեղադրյալին պարտադիր ձերբակալելու պահանջ՝ որպես դրա կատարման հիմք համարելով նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն ներկայացնելը: Օրենսդիրն այդպիսով մեղադրյալի ձերբակալումը պարտադիր է համարել ընդամենը նրան կալանավորելու պատշաճ, քննարկման ենթակա միջնորդություն ներկայացնելու համար՝ հանգեցնելով մի վիճակի, որ անձն անազատության մեջ է հայտնվում նրա ազատության իրավունքի երաշխավորման հարցը քննարկելու համար:

Դատարան ներկայացնելու համար մեղադրյալի պարտադիր ձերբակալումը չի բխում ազատության կանխավարկածից, ձևական և նույնիսկ տեխնիկական պատճառներով պարտադիր է դարձնում մեղադրյալի անազատությունը՝ հակասելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 9-րդ հոդվածին և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 9-րդ հոդվածին, որոնք արգելում են անձի կամայական ու քմահաճ ձերբակալումը:

Եզրակացություն

Յուրաքանչյուրի անձնական ազատության իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով, իսկ Եվրոպական դատարանի իրավունքում, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի բանաձևերում ու հանձնարարականներում, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում սահմանված են դրա պաշտպանության ավելի հստակ չափանիշներ: Այդ փաստաթղթերը հռչակում են ազատության կանխավարկածը, անընդունելի համարում և մերժում կոնկրետ իրավիճակում անձին կալանավորելու պարտականություն նախատեսող օրենսդրությունը, արգելում ազատությունից կամայականորեն զրկելն ու սահմանում, որ այն պետք է իրականացվի հիմնավոր պատճառներով և արդարացված՝ հանրային շահի պաշտպանության տեսանկյունից: Անձին ազատությունից զրկելը վերջին միջոցը պետք է լինի այն նպատակին հասնելու համար, հանուն որի այդ հարկադրանքը կիրառվում է:

Մույն վերլուծությունը, սակայն, վկայում է, որ ձերբակալման առավել շատ կիրառվող երկու տեսակների՝ հանցանք կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի դեպքում ձերբակալելու և ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար ձերբակալման իրավակարգավորումներն ու մեկնաբանությունները շեղվել են ձերբակալման ինստիտուտի առջև դրված նպատակներից՝ ձերբակալման առաջին տեսակի դեպքում անհիմն կերպով անհնարին դարձնելով դատավարական հարկադրանքի այդ անհետաձգելի միջոցի կիրառման հնարավորությունը, իսկ երկրորդ դեպքում՝ դատարան տարվող մեղադրյալի ձերբակալումը դարձնելով պարտադիր, իսկ նրա անազատությունը՝ կանխավարկած:

ГЕВОРГ БАГДАСАРЯН – «Обязательное» задержание обвиняемого и невозможность задержания лица на основании непосредственно возникшего подозрения. – Статья посвящена практическим вопросам защиты права на свободу личности в контексте правового регулирования задержания на основании непосредственно возникшего подозрения в совершении преступления и задержания обвиняемого, находящегося на свободе, для представления его в суд.

Говоря о задержании на основании непосредственно возникшего подозрения в совершении преступления автор критикует, основанное на праве созданном Кассационным судом, абсолютный запрет применения данного вида ареста при возбужденном уголовном производстве.

Утверждая, что возбуждение уголовного производство само по себе не исключает немедленного задержания лица в ситуациях с внешними признаками преступности, автор считает неприемлемым критерий «невозбужденного уголовного производства» для того, чтобы считать подозрения непосредственно возникшим, а вместо него выдвигает критерий «подозрения, не вытекающего из доказательств».

Говоря о другом виде задержания, автор утверждает, что Уголовно-процессуальный кодекс установил обязательное требование о задержании обвиняемого, находящегося на свободе, для представления его перед судом, что является проявлением презумпции лишения лица свободы и противоречит презумпции личной свободы и международно-правовому запрету произвольного задержания.

Автор считает, что законодатель в данном случае посчитал обязательным задержания лица в формальных целях, а именно, для того, чтобы считать ходатайство об аресте обвиняемого надлежащим и начать процедуру задержания, с целью избавить суд, заключившим под стражу, от бремени быть названным лишивший свободы.

Ключевые слова: *право на личную свободу, презумпция свободы, уголовное производство, суд, задержание, заключение под стражу, обоснованное подозрение; обвиняемый, внешние признаками преступления*

GEVORG BAGHDASARYAN – "Compulsory" Arrest of the Accused and the Impossibility of Arresting a Person on Directly Originated Reasonable Suspicion. – The article is devoted to the practical issues of the protection of the right to personal liberty in the context of the legal regulations of arresting a person in case of the existence of reasonable suspicion that has arisen directly about having committed a crime and arrest for taking before the Court the accused who is at large.

Referring to arresting a person in case of the existence of reasonable suspicion that has arisen directly about having committed a crime, the author criticizes the absolute prohibition of applying this type of arrest when criminal proceedings are initiated, as it is defined in the law of the Court of Cassation. Substantiating the fact that criminal proceedings have been initiated in itself does not exclude situations of immediate arrest of a person with external signs of a crime, the author considers the criterion of “no criminal proceedings have been initiated” to be unacceptable for considering an existence of reasonable suspicion that has arisen directly about having committed a crime, and instead puts forward the criterion of “the suspicion which is not arising from the evidence”.

Referring to the other type of arrest, the author claims that the Criminal Procedural Code established a requirement to arrest the accused who is at large for taking him before the Court. Such a requirement is a manifestation of the presumption of deprivation of liberty, which contradicts the presumption of personal liberty and the international legal prohibition of arbitrary arrest. The author believes that the legislator considered the arrest of the accused mandatory for formal purposes, such as in order to consider the motion to detain the accused as proper and to initiate the detention proceedings, with the aim of sparing the court that arrested the latter from the burden of being considered a depriver of liberty.

Key words: *right to personal liberty; presumption of liberty; criminal proceedings; court; arrest; detention; reasonable suspicion; accused; external signs of crime*

Գրականության ցանկ

- Ալբերտ Հովհաննիսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2024 թվականի հունվարի 18-ի թիվ ՀԿԴ/0188/06/23 որոշում: (Albert Hovhannisyan-i veraberyal gortsov Vchrrabek datarani 2024 tv. hunvari 18-i tiv HKD/0188/06/23 voroshum).
- ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, էջ 190, <https://rm.coe.int/new-criminal-procedure-code-guideline-/1680a72908>, վերջին մուտք՝ 01.03.2025թ. (ՀՀ կրեան ատարուտան ուր օրենցիրկի հայեսակարցային ևտսսմերի, ուրարական մոտետսմերի յեւ հիմնական ինստիտուտներու մեկնաբան ցոտսական սցետսսյտս, էջ. 190).
- ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009թ. սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշում: (ՀՀ Sahmanadrakan datarani — 2009 tv. septemberi 12-i SDO-827 voroshum).
- Меликян, Р. Некоторые вопросы интеграции института задержания в общую логику судебного контроля над ограничением фундаментального права на личную свободу, Պետություն և իրավունք N 2 (90) 2021, էջ 104 (Melikyan, R. Nekotorye voprosy integratsii instituta zaderzhaniya v obshchuyu logiku sudebnogo kontrolya nad ogranicheniem fundamental'nogo prava na lichnyuyu svobodu, Petutyun yev iravunk, No. 2 (90), 2021, ej. 104).